The European Union's "Support to Migration Policy Development and Relevant Capacity Building in Armenia" Programme

Եվրամիության «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության և համապատասխան կարողությունների հզորացմանը» ծրագիր

Policy Brief
Համառոտագիր

This project is funded by
the European Union
Ծրագիրը ֆինանսավորվել է
Եվրամիության կողմից

BRITISH COUNCIL

ICHD

This project is implemented by
Ծրագիրն իրականացնում են՝

ԲՐԻԹԻՇ ՔԱՈՒՆՍԻԼ

International Center for Human Development
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Migration Agency of the Ministry of Territorial Administration of RA
ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն

ԵՀՔ ԳԾ-ն որպես ՀՀ միգրացիոն արդյունավետ քաղաքականության զարգացման խթան

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Թղթից դեպի գործ

Գաղտնիք չէ, որ «Եվրոպական հարևանության քաղաքականության» գործողությունների ծրագիրն ընդունված է, ԵՀՔ շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված՝ 2007 թվականի ընթացքում իրականացվելիք միջոցառումների պատկառելի ցանկն էլ՝ հաստատված: Ի՞նչ է առաջարկում ԵՀՔ քաղաքական փաստաթուղթը Հայաստանին: Չափազանց պարզ ու հասկանալի գործընթաց՝ նախաձեռնել ԵՄ հետ զուտ համագործակցություն զարգացնելու հեռանկարից դուրս եկող ավելի սերտ հարաբերություններ, ինչը ենթադրում է տնտեսական ինտեգրացիա և քաղաքական համագործակցության խորացում:

ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով ԵՀՔ փաստաթղթում ամրագրված սկզբունքները, 2007-ի հուլիսի 19-ին հաստատեց տարեկան միջոցառումների և առաջնայնությունների ցանկը: Լինենք արդարացի՝ գոնե միգրացիոն ոլորտին նվիրված մասը շարադրված է բավականաչափ հստակ, առանձնացված են խնդիրներն ու սահմանված են պատասխանատուները:

Գործընթացի մեկնարկը տրված է: 2007 թվականի համար սահմանված միջոցառումների շրջանակներում իրականացվում են որոշակի քայլեր, մասնավորապես՝

- անօրինական միգրացիայի կարգավորման նպատակով եվրոպական չորս երկրների հետ կնքվել են ռեադմիսիոն համաձայնագրեր, 10 այլ երկրների հետ համաձայնագրերի կնքման շուրջ բանակցություններն ընթացքի մեջ են,
- փախստականների և ապաստանի հարցերի կարգավորման շրջանակներում շրջանառության մեջ է դրված ՀՀ օրենքի նախագիծ,
- միգրացիոն հոսքերի վերահսկման էլեկտրոնային տվյալների համակարգի մշակման ուղղությամբ առաջին քայլն արված է...

Թվարկումը, թերևս, կարելի է շարունակել: Սակայն այդ ցանկից անհրաժեշտ է առանձնացնել մեկը, որ կարևոր է ոչ միայն ԵՄ-Հայաստան հարաբերությունների տեսանկյունից, այլ նաև խիստ արդիական թե՛ սոցիալական և տնտեսական անվտանգության և թե՛ աշխարհաքաղաքական արագ փոփոխվող ու անկանխատեսելի իրականության պայմաններում:

Արդյո՞ք ոտքը վերմակի չափ է մեկնվել

ՀՀ միգրացիոն ոլորտի կարգավորման խնդիրների շարքում դրվում է չափազանց կարևոր և հավակնոտ առնվազն մեկ առաջադրանք՝ մշակել միգրացիայի և ապաստանի խնդիրների ազգային գործողությունների ծրագիր:

Ունենալ Ազգային գործողությունների ծրագիր նշանակում է ունենալ ՀՀ միգրացիոն ոլորտի կարգավորման հիմնական քաղաքական մի փաստաթուղթ, որում հասցեագրված են ինչպես անօրինական միգրացիայի կանխարգելման, փախստականների և ապաստանի, միգրացիոն հոսքերի վերահսկման, մուտքի և ելքի հարցերի կարգավորման, այնպես էլ բազմաթիվ այլ՝ կառավարության որոշումներում թվարկված կամ չթվարկված խնդիրները:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Ահա այս կետում գործընթացը կաղում է: Այստեղ է, որ, կարծես, իրատեսորեն չեն գնահատվել առկա ռեսուրսները, հաշվի չի առնվել, որ ոլորտի պատասխանատու օղակների կարողությունների հզորացման անհրաժեշտություն կա:

Երկաթը տաք է, մնում է ծեծել

Մեռյալ կետից շարժվելու համար առկա է չափազանց նպաստավոր մթնոլորտ և նախադրյալներ.

- ԵՀՔ ԳԾ առկայությունն արդեն իսկ վկայում է այն մասին, որ ինչպես ԵՄ, այնպես էլ ՀՀ կողմից հստակ գիտակցվում է շահերի ողջ համակարգը՝ ներառյալ քաղաքական և տարածքային անվտանգությունը,
- պատկան մարմիններն ունեն հստակ պատկերացում փաստաթղթի վերաբերյալ և քաղաքական կամք այն իրականություն դարձնելու տեսանկյունից,
- միջազգային հանրության կողմից առկա է շահագրգիռ պատրաստակամություն օժանդակելու այս նախաձեռնությանն, ինչպես երկկողմ պաշտոնական հարաբերությունների, այնպես էլ փորձագիտական օժանդակության տրամադրման ուղղություններով,
- հետզհետե ավելի զգալի է դառնում հարցերը հրապարակ հանելու և հրատապ դարձնելու ուղղությամբ հասարակական պահանջարկը:

Ո՞րն է մոտեցումը

Խնդիրների կարևորությունը պարզապես պարտավորեցնում է միավորել առկա ուժերն ու ռեսուրսները, այդ թվում՝ միջազգային և դոնոր, ինչպես նաև տեղական հասարակական կազմակերպությունները:

Իսկ մոտեցումը պիտի լինի փուլային: Առաջին փուլում մեզ անհրաժեշտ է ուսումնասիրել միգրացիոն խնդիրները ԵՀՔ տեսանկյունից, ամրագրել կարևորագույն հանգուցային կետերն ու մշակել քաղաքական փաստաթղթի կառուցվածքը (կմախքը): Այստեղ մեզ աջակցության պիտի գա միջազգային փորձն ու փորձագիտական ներուժը: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական և վերլուծական աշխատանք, առաջադրել հնարավոր լուծումներ և զարգացման սցենարներ:

Երկրորդ փուլը պետք է նախատեսել նախորդի արդյունքում որոշված «կմախքին միս ու արյուն» տալու, փաստաթղթի բովանդակությունը մշակելու համար: Այստեղ անհրաժեշտ է միավորել և՛ պետական, և՛ հասարակական, և՛ միջազգային փորձագիտական ներուժը, օրինակ՝ ստեղծելով միջգերատեսչական հանձնաժողով և դրա ենթակայությամբ գործող աշխատանքային խմբեր:

Երրորդ փուլ. մշակել միգրացիոն ոլորտի կարգավորման քաղաքական փաստաթուղթը կյանքի կոչելու Ազգային ծրագրի գործողությունների ու խնդիրների միասնական և համապարփակ ցանկ՝ առանձնացնելով և սահմանելով պատասխանատու մարմիններն ու կառույցները, ինչպես նաև դրանք իրագործելու համար անհրաժեշտ ֆինանսական և այլ միջոցները:

Համառոտագիրը մշակվել է «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության մշակմանն ու համապատասխան կարողությունների ձևավորմանը» ծրագրի շրջանակներում 2007թ-ի նոյեմբերի 9-ին կայացած կլոր սեղանի մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: